ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/23

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Բողոք բերող՝ «ՖՏԴ-Շին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Պողոսյանի, ներկայացուցիչ՝ Մ. Մկրտչյանի

«ՖՏԴ-Շին» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու և «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին կայացված որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.03.2021թ.-ին:

25.03.2021թ.-ի որոշմամբ www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/23 համարի ծածկագիրը:

01.04.2021թ.-ին և 16.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.04.2021թ.-ին:

2. «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ն 24.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկ Հավելված 2 գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր նշված է՝ «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1-1» (վերջին թիվ 1-ը ավելորդ է):

«ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 39 994 794 ՀՀ դրամ (գինը առանց ԱԱՀ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար, բացառապես՝ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի և մի շարք այլ մասնակիցների, որոնց հայտերը գնահատվեց անբավարար և մերժվեց:

Իսկ արդեն համացանցային կայքում 23.03.2021թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարության համաձայն՝ պարզ է դառնում, որ «ՖՏԴ-

ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ գնային առաջարկում սխալ է նշված հրավերի ծածկագիրը:

Նույն հայտարարության համաձայն՝ հաղթող մասնակից է ճանաչվել «Սնար» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմում է 44 689 540 ՀՀ դրամ (գինը առանց ԱԱՀ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են

առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգին մասնակից «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, Ընթացակարգի ծածկագիր նշված է «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» / վերջին թիվ 1-ը ավելորդ է, կցվում է/:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է՝ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես հետագայումպարզ դարձավ՝ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ գնային առաջարկում սխալ է նշված հրավերի ծածկագիրը:

Գտնում ենք, որ այս պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու՝ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ նշելու հիմքով:

Վերոհիշյալը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է մասնակցի ներկայացրած գնային առաջարկում հնարավոր անհամապատաս-խանությունների հնարավոր դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման և հաշվի առնելով, որ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 2-ում առկա տեխնիկական վրիպակը կապված չէ բուն գնային առաջարկի՝ հաշվարկի հետ, ուստի գտնում ենք նման տեխնիկական վրիպակը հիմք չէր մասնակցի հայտը մերժելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ նման տեխնիկական վրիպակի հիմքով, որը անվավեր չի դարձնում ներկայացված գնային առաջարկը, մերժվել է ավելի էժան գին ներկայացրած «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը, ինչի արդյունքում պետությունը սրիպված է լինելու

պայմանագիր կնքել հաջորդ տեղ զբաղեցնող և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ:

Մասնավորապես, «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 39 994 794 ՀՀ դրամ (գինը առանց ԱԱՀ), մինչդեռ հաղթող մասնակից է ճանաչվել «Սնար» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը արդեն կազմում է 44 689 540 ՀՀ դրամ (գինը առանց ԱԱՀ): Այլ կերպ ասած, գնային առաջարկում նշված ծածկագրում մեկ թվի ավելորդ լինելը հանգեցրել է նրան, որ պետությունը ստիպված է լինելու պայմանագիր կնքել մոտ 5 մլն. ավելի թանկ գնային առաջարկ ներկայացրած անձի հետ, ինչի արդյունքում խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված գնումների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքը:

Ցանկանում ենք հայտնել նաև, որ գրեթե նմանատիպ գործ քննվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում /ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 ծածկագրով բողոքը բավարարվել է/, որտեղ Ընկերության հայտը մերժել էր, քանի որ գնային առաջարկում <<Տերմինալ Պլյուս>> ՍՊԸ-ի փոխարեն նշվել է <<Տերմիալ Պլյուս>> ՍՊԸ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 ծածկագրով բողոքի վերաբերյալ 29.08.2019թ. կայացրած որոշմամբ՝ բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ուսումնասիրելով «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված ոչ միայն գնային առաջարկի, այլ նաև հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերի վրա առկա է Ընկերության ռուսերեն լեզվով կնիքը, որի վրա նշված է ՕՕՕ «Терминал-Плюс», իսկ մասնակցության հայտի թիվ 1 Հավելվածում նշված է նաև Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը ….: Դրա հետ մեկտեղ, ամփոփելով վերը նշված փաստերը, գտնում եմ որ «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում մասնակցի անվան մեջ <<ն>> տառի բացակայությունը չի կարող դիտարկվել էական վրիպակ վերջինիս հայտը մերժելու համար:

Ձեր ուշադրությունն ենք դարձնում նաև մեկ այլ՝ նմանատիպ գործի, որը նույնպես քննվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում /ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 ծածկագրով բողոքը բավարարվել է /.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ՝ բողոքներ քննող անձն արձանագրել է, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն

ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Այսպիսով՝ չնայած այն հանգամանքին, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը սահմանում են, որ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված գնային առաջարկն առանց շտկելու հնարավորության ենթակա է մերժման, այնուամենայնիվ, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է այն բացառությունները, որոնց առկայության պայմաններում մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման:

Ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի գնային առաջարկը և դրանում տեղ գտած վրիպակը, ինչպես նաև հիմք ընդունելով գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման անհրաժեշտությունը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը՝ գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության գնային առաջարկում ընթացակարգի ծածկագրերից մեկը սխալ է նշվել, այնուամենայնիվ նշված վրիպակի էական չլինելու պատճառով Ընկերության գնային առաջարկը պետք է գնահատվի բավարար…:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված և վերջնական պահանջը և խնդրել է պարտավորեցնել «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու և «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին կայացված որոշումները:

3. «<u>Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/4430-2021 գրությամբ դիմել է «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից 24.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ծանուցված լինելով 01.04.2021թ.-ին հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր մասնակցությունը:

Պատվիրատուն 30.03.2021թ.-ին ներկայացրած թիվ 195-58 գրությամբ, ներկայացնելով «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

««Երևանի թիվ 195 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) կարիքների համար «Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների» գնման նպատակով հայտարարված «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Ընթացակարգի հրավերով հայտերի ներկայացման համար նախատեսված ժամկետում (մինչև 11.03.21թ., ժամը 11:00) հայտ էին ներկայացրել թվով 11 մասնակից, այդ թվում՝ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ն: Սահմանված ժամկետում հայտերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը (հավելված թիվ 2) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, դրանում նշված ընթացակարգի ծածկագիրը տարբերվում է հրավերով նախատեսված ծածկագրից, այսինքն՝ սխալ է: Հանձնաժողովի կողմից սխալն արձանագրելու փաստը ներառված է 19.03.21թ. կայացած

նիստի թիվ 4 արձանագրության մեջ: Ընդ որում նշված սխալն արձանագրվել է ևս երկու այլ կազմակերպությունների հայտերում:

Ամփոփելով ներկայացված հայտերի և առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերի գնահատման արդյունքները՝ գնահատող հանձնաժողովը 23.03.21թ. կայացած նիստի ընթացքում որոշում է կայացրել ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից նվազագույն առաջարկ ներկայացրած «ՍՆԱՐ» ՍՊԸ-ին, իսկ «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

Հարկ է նկատել, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով հստակ սահմանված է, որ «հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ Կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի»: Կարծում եմ՝ այն փաստը, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը հրավերի պահանջներին համապատասխան չի ներկայացվել՝ ապացուցման կարիք չունի, քանի որ ընթացակարգի հրավերով սահմանվել է մի ծածկագիր, սակայն ներկայացված գնային առաջարկը պարունակել է այլ ծածկագիր (թեկուզ և մեկ թվի կամ մեկ տառի տարբերությամբ): Համոզված կարող եմ նշել, որ եթե Ընկերությունը օրինակի համար թյուրիմացաբար նախահաշվային գնից շատ անգամ ավելի ցածր գին գրած լիներ և հանձնաժողովը մերժած չլիներ սխալ ծածկագիր գրելու համար, ապա Ընկերությունը կբողոքարկեր իր հայտը չմերժելու փաստը և կարծում եմ դա կդիտվեր իրավաչափ:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում նաև Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի վրա, որտեղ հստակ սահմանվում են այն դեպքերը, երբ գնային առաջարկը ենթակա չէ մերժման և որտեղ որևէ խոսք անգամ չկա սխալ ծածկագիր նշելու դեպքում չմերժելու կամ շտկման հնարավորություն տալու մասին:

Օրենսդիրի տրամաբանությունը այս հարցում միանշանակ ընդունելի է, քանի որ գնային առաջարկը իրավական հետևանք առաջացնող փաստաթուղթ է և դրա հստակությունը որևէ կասկած չպետք է հարուցի, ուստի և եթե նախատեսված չէ դրանում առկա անհամապատասխանության շտկման հնարավորություն, ապա գնահատող հանձնաժողովը, որպես պետական պաշտոնյաներից կազմված կոլեգիալ մարմին, չի կարող

դուրս գալ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից և կայացնելու որոշում, որի իրավունքը հստակ սահմանված չէ օրենսդրությամբ:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից որպես նմանատիպ օրինակ բերված բողոքներին, ապա ակնհայտ է, որ դրանք էականորեն տարբերվում են քննարկվող դեպքից և դրանցում առկա են անհերքելի փաստեր, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել նույնականացում:

Ավելորդ չեմ համարում անդրադառնալ նաև Ընկերության այն մեղադրանքին, որ Ընթացակարգի արդյունքում գնման պայմանագիրը կնքվելու է ավելի բարձր գնով, քան իր առաջարկն է՝ հղում կատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակներին և սկզբունքներին: Հարցն այն է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունն ամբողջությամբ, այդ թվում նաև այն կարգավորումները, որոնք վերաբերվում են հայտերում առկա հնարավոր անհամապատասխանություններին և դրանց մասով լուծումներին, հիմնված են այդ սկզբունքների վրա և օրենսդրությամբ սահմանված կարգով չառաջնորդվելը կհանգեցի ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքի խախտմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ Ընկերության ներկայացրած պահանջները հիմնազուրկ են, նախատեսված չեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, իսկ գնահատող հանձնաժողովը, մերժելով «ՖՏԴ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ՝ ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Գրությանը կից Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի բացման նիստերի արձանագրությունը, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը, պայմանագրի կնքելու որոշման մասին հայտարարությունը և Մասնակցի կողմից ներկայացված հայտը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2021թ.-ին հայտարարվել է «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ն:

iii. «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում որպես գնման ընթացակարգի ծածկագիր է նշվել «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1-1»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հայտ ներկայացրած 11 մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ն՝ առաջարկելով 39 994 794 ՀՀ դրամ գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ, իսկ «Սնար» ՍՊԸ առաջարկել է 44 689 540 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

v. Հանձնաժողովի 19.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրություն համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «ՖՏԴ-Շին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի: Վերջինիս ներկայացրած հայտի հավելվածներում, ներառյալ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում սխալ է նշվել գնման ընթացակարգի ծածկագիրը:

vi. Հանձնաժողովի 23.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժվել:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ «Սնար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 53 627 450 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

viii. www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 23.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից 24.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2021թ.-ին հայտարարված «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,

իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի թիվ 195 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2021թ.-ին հայտարարված «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում որպես գնման ընթացակարգի ծածկագիր է նշվել «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1-1»: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ հայտ ներկայացրած 11 մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ն՝ առաջարկելով 39 994 794 ՀՀ դրամ գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ, իսկ «Սնար» ՍՊԸ առաջարկել է 44 689 540 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Սակայն Հանձնաժողովի 19.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրություն համաձայն «ՖՏԴ-Շին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի հավելվածներում, ներառյալ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում սխալ է նշվել գնման ընթացակարգի ծածկագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 23.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացվել «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժվել, իսկ «Սնար» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից՝ 53 627 450 ՀՀ դրամ ընդհանուր գնով: www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 23.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես գնման ընթացակարգի ծածկագիր նշել է «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1-1»՝ «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1»-ի փոխարեն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ թիվ 2 հավելվածով սահմանված գնային առաջարկում «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1»-ի փոխարեն նշված «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1-1» /մեկ (1) նիշ ավել/ հանդիսանում է վրիպակ /տպագրված գործի մեջ տեղ գտած սխալ (ուղղագրական,

կետադրական և այլն)/ *(տե՛ս, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976):*

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Ընկերության հայտը, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից 24.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/23 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «Թ195ԴՊ-ԳՀԱՇՁԲ-ՄՄ-21/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու և «ՖՏԴ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**